Մէ օր խլիսուն[1]) կ'տեսնան, մէ բարակ մուխ մէ ձորից կ'էլ-նի։ Գնացին, տեսան մէ խալուոր մարդ։ Ասաց. «Պապիկ, էդ ի՞նչ կ'անես»։

Ասաց. «Էս էլ իմ տունն ա»։

Ասաց. «Արի՛ էթանք քեզ պահենք»։

Ասաց. «Քեռ տուն ձի տուն չի էղնի»։

Ասաց. «Քե կ'շլակեմ, կ'տանեմ, կ'բերեմ. մէ տուն եմ շինե, անուն դիր»։ Խալուոր շլակից, տարաւ տարաւ տուն, էն իրիկուն իքրամ արից [2])։ Խլիմուն տանից էլաւ դիւռ, էն մէկ կշտենէն գնաց չուր իրիկուն, նոր էլի դիւռ։

Ասաց. «Որդի, էս տուն չի, էս Սասում ի»։ Անուն դրին Սասում։

Ասին. «Ի՞նչ անինք, ինչ չանինք, պէտք ա մինք պսակուինք որտեղաց աղջիկ բիրինք»։

Քեռսայ վարդըպետ ասաց. «Ձե արժան ա, որտեղ եօթ ճեռղ քեոր[3]) կայ»։

Կան էկան, եօթ ճեռղ քեոր գնդան. եօթ օր խարսնիս արի-ցին, քէֆ ուրախութիւն արիցին, կեր ու խում արիցին, մե մի բան չտուեցին։ Համա Աստծուց իրեք խնձոր իրե, մէկ ականջ արողին, մէ չարողին, մէկ ասողին։

Ընդունք էնդեղ խասան իրանց մուրազին, դիւք էլ էստեղ խասնիք ձեր մուրազին*)։

---

[1]) Լուսադիմին։ [2]) Պատիւ տուեց։ [3]) Քոյր։

*) Այս ճիւղը պատմել է մեզ տասնեակ տարի մեր կողմե-րում ապրած մի Մոկացի։ Լեզուն, ինչպէս տեսնում է, համարեա բոլորովին փոխուած է, բայց բովանդակութիւնը, ինչպէս հաւա-տացնում էր Մոկացին, շատ լաւ գիտէր։